ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2018թ. նոյեմբերի 26-28-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով բանակցությունների գլխավոր տնօրինություն և ԵՄ արտաքին գործողությունների ծառայություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Օրենքի գերակայության հարցերով ԱլԳ 4-րդ հարթակի հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Օրենքի գերակայության հարցերով ԱլԳ հարթակի շրջանակում քննարկվել են ԱլԳ երկրներում արդարադատության բարեփոխումներին և դրանց՝ ԵՄ աջակցության հեռանկարներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով բանակցությունների գլխավոր տնօրինության և ԵՄ արտաքին գործողությունների ծառայության հրավերով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը 2018թ. թվականի նոյեմբերի 26-ից 28-ը Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) մասնակցել է Օրենքի գերակայության հարցերով ԱլԳ հարթակի հանդիպմանը:

Օրենքի գերակայության հարցերով ԱլԳ հարթակի շրջանակում քննարկվել են ԱլԳ երկրներում արդարադատության բարեփոխումներին և դրանց՝ ԵՄ աջակցության հեռանկարներին առնչվող հարցեր: Մասնավորապես, քննարկվել են պետական մարմինների համակարգում դատախազության տեղի և դերի, դատախազության անկախության և հաշվետվողականության երաշխավորման ու

դատախազների նշանակման և առաջխաղացման թափանցիկությանը վերաբերող հարցեր:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև արդարադատության անկախության, որակի և արդյունավետության հետ կապված հիմնահարցերին:

Օրենքի գերկայության հարթակի հանդիպման հիմնական նպատակն է եղել Արևելյան գործընկերության 6 երկրներում՝ Հայաստանի Հանրապետությունում, Ադրբեջանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրանիայում աջակցել արդարադատության բարեփոխումներին:

Օրենքի գերկայության հարթակի հանդիպմանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը ներկայացրել է ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների ոլորտում տեղի ունեցող վերջին զարգացումները, ինչպես նաև այս ոլորտում Եվրոպական միության հետ ձեռք բերված պայմանավորվածություններն ու հետագա քայլերը՝ միաժամանակ շեշտադրելով Հարևանության և ընդլայնման հարցերով բանակցությունների գլխավոր տնօրինության և ԵՄ արտաքին գործողությունների ծառայության հնարավոր աջակցության տրամադրումը: Այս համատեքստում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակման փուլում է գտնվում 2019-2024թթ. Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը՝ նշելով, որ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարի հրամանով ստեղծվել է Իրավական և դատական բարեփոխումների 2019-2024թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը մշակող աշխատանքային խումբ:

Նշվել է նաև, որ արդարադատության ոլորտում բարեփոխումների վերաբերյալ ԵՄ-ՀՀ բազմակողմ քաղաքական երկխոսության հիմնական նպատակն է ՀՀ իշխանությանը արդարադատության ընդհանուր կառուցվածքի և գործունեության ոլորտի բարեփոխումների իրականացման գործում աջակցելը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արդարադատության ոլորտի արդյունավետ

կառավարմանը՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորություններին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով ոլորտային կարիքները և ֆինանսական հնարավորությունները:

Միևնույն ժամանակ, ԱլԳ հարթակի հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական հանձնաժողովի և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության կողմից համատեղ պատրաստված 20 արդյունք մինչև 2020թ. փաստաթղթին: Ներկայացվել է նաև վերը նշված փաստաթղթի՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավասությանն առնչվող միջոցառումների իրականացման ընթացքը:

Հարկ է նաև նշել, որ վերը նշված ԱլԳ հարթակի հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը և ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության պետ Տիգրան Գրիգորյանը:

Օրենքի գերակայության հարցերով ԱլԳ հարթակի հանդիպման ավարտին ԵՄ ներկայացուցիչները վերահաստատել են իրենց պատրաստակամությունը աջակցելու ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների ծրագրի մշակմանը և դրա արդյունավետ իրականացմանը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ**

30.11.2018թ.